



Համարը
Տիպը Համաձայնագիր
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2017.07.26/1(38)
Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն
Ստորագրող մարմինը
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 19.12.2016

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Մակաո
Ընդունման ամսաթիվը 03.02.2016
Ստորագրման ամսաթիվը 03.02.2016
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՈՅԻ ՀԱՏՈՒԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՄԻՋԵՎ ՍՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋԸ ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՈՅԻ ՀԱՏՈՒԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՄԻՋԵՎ ՍՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋԸ ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Մակաոյի հատուկ վարչական տարածքի վարչակարգը, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կենտրոնական ժողովրդական կառավարության կողմից պատշաճ կերպով լիազորված լինելով կնքելու սույն Համաձայնագիրը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

Ցանկանալով զարգացնել բարեկամական հարաբերությունները, խրախուսել տնտեսական և առևտրային կապերը և ղյուրացնել մարդկանց տեղաշարժը երկու Պայմանավորվող կողմերի միջև, համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1

1. Հայաստանի Հանրապետության վավեր անձնագիր (դիվանագիտական կամ սովորական) ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ազատված են Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Մակաոյի հատուկ վարչական տարածքի՝ մուտքի, ելքի կամ տարանցման արտոնագրային պահանջներից: Յուրաքանչյուր այցի ժամանակ Մակաոյի հատուկ վարչական տարածքում գտնվելու տևողությունը 365 օր ժամանակաշրջանում չպետք է գերազանցի իննսուն (90) օրը:

2. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Մակաոյի հատուկ վարչական տարածքի վավեր անձնագիր կամ ճամփորդելու թույլտվություն ունեցողները ազատված են Հայաստանի Հանրապետության՝ մուտքի, ելքի կամ տարանցման արտոնագրային պահանջներից: Յուրաքանչյուր այցի ժամանակ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու տևողությունը 365 օր ժամանակաշրջանում չպետք է գերազանցի իննսուն (90) օրը:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված անձանց մուտքի արտոնագրից ազատումը չի ընձեռում աշխատելու իրավունք: Մյուս Պայմանավորվող կողմի տարածք աշխատելու, մասնագիտական գործունեությամբ զբաղվելու, սովորելու կամ այնտեղ ավելի քան իննսուն (90) օր գտնվելու նպատակով մուտք գործած անձինք պարտավոր են նախապես ստանալ անհրաժեշտ թույլտվություններ:

Հոդված 3

Մուտքի արտոնագրային պահանջի վերացումը Պայմանավորվող կողմերի կողմից տրամադրված վավեր անձնագիր կամ ճամփորդելու թույլտվություն ունեցողներին չի ազատում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում գործող, մասնավորապես, մուտքի, գտնվելու և ելքի հետ կապված օրենքներին ենթարկվելու պարտավորությունից:

Հոդված 4

Սույն Համաձայնագիրը չի ազդի յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի իրավասու մարմինների՝ մյուս Պայմանավորվող կողմի անցանկալի համարվող անձանց մուտքը իր տարածք կամ իր տարածքում նրանց գտնվելը մերժելու իրավունքի վրա:

Հոդված 5

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի իրավասու մարմինները ցանկացած պահի պետք է հետ ընդունեն իրենց տարածք սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված՝ իրենց սեփական անձնագրեր կամ ճամփորդական փաստաթղթեր ունեցող ցանկացած անձի:
2. Սույն Համաձայնագրի համաձայն հետ ընդունելու հետ կապված բոլոր տրանսպորտային ծախսերը կհոգա այն Պայմանավորվող կողմը, որի տարածքից անձը ուղարկվում է:

Հոդված 6

1. Պայմանավորվող կողմերը իրենց իրավասու մարմինների միջոցով պետք է փոխանակեն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված վավեր անձնագրերի և ճամփորդական փաստաթղթերի նմուշները սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց առնվազն երեսուն (30) օր առաջ:
2. Եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո փոփոխում է սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված անձնագրերը կամ ճամփորդական փաստաթղթերը կամ ներդնում է նոր անձնագրեր կամ ճամփորդական փաստաթղթեր, նա պետք է իր իրավասու մարմինների միջոցով մյուս Պայմանավորվող կողմին տրամադրի այդպիսի փաստաթղթերի նմուշներ դրանք գործածության մեջ դնելուց առնվազն երեսուն (30) օր առաջ:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրը չի ազդի միջազգային իրավունքի ներքո Պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունների վրա:

Հոդված 8

Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով: Այդ արձանագրություններն ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով և կկազմեն դրա անբաժանելի մասը:

Հոդված 9

1. Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց կուղարկեն գրավոր ծանուցագիր՝ հաստատելով, որ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ համապատասխան ներպետական ընթացակարգերը կատարվել են: Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից և ուժի մեջ է մնում անորոշ ժամկետով:
2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է կասեցնել կամ դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը հասարակական կարգի պահպանման, անվտանգության, առողջության կամ այլ արդարացված պատճառներով՝ մյուս Պայմանավորվող կողմին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով:
3. Դադարեցումն ուժի մեջ կմտնի ծանուցումը մյուս Պայմանավորվող կողմի ստանալու ամսաթվին հաջորդող ամսվա առաջին օրը:
4. Կասեցումն ուժի մեջ կմտնի անմիջապես այդ մասին պաշտոնական ծանուցման օրը՝ առանց խոչընդոտելու սույն

Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի իրականացմանը:

Կատարված է Մակառ քաղաքում 2016 թվականի փետրվարի 3-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, չինարեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2016թ. դեկտեմբերի 19-ին: